ՀՏԴ 94(479.243)

Պատմություն

Մհեր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
հումանիտար առարկաների ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.
E-mail: hamher@yandex.ru

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (2020 Թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ)

Մեր տարածաշրջանի վերջին մեկ տարվա ռազմաքաղաքական քրոնիկոնը գալիս է փաստելու, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը զինադադարի վերաբերյալ որևէ հիմք չի տալիս պատերազմի ավարտի մասին պատրանքներ ունենալու, մանավանդ հայկական կողմերին: Այդուհանդերձ քիչ չեն այն գործիչները, որոնք կամա թե ակամա հայտնվել են թշնամու քրոզչական-դիվանագիտական նոր ծուղակում և մեխանիկորեն կրկնում են պատերազմն ավարտվելու մասին Ադրբեջանի ու Թուրքիայի միակողմանի պնդումները:Հայկական կողմերի համար պատերազմը չի ավարտվել, քանի դեռ մեր պետականությանը նետված մարտահրավերները հաղթահարված չեն, մանավանդ վերականգնված չէ Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, և միջազգայնորեն ճանաչված չէ նրա՝ անկախ պետության կարգավիճակը:

Նման պայմաններում առաջանցիկ են մնում ոչ միայն ՀՀ զինված ուժերի արդիականացումն ու վերազինումը, այլ նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի արմատական վերափոխումը: Ինչքան էլ անհաղթահարելի թվան Արցախի Հանրապետությունում ռազմական շինարարության խնդիրները, օր առաջ պետք է ձեռնամուխ լինել դրանց հանգուցալուծմանը, պաշտպանական-անվտանգային համակարգի կենսունակության ու արդյունավետության բարձրացմանը:

Արցախի զինված ուժերի կոնկրետ կազմակերպվածքն ուղիղ համեմատական է լինելու մեր հանրապետության հնարավորություններին և նրան, թե որքան համարժեք են գնահատվելու Արցախի ինքնիշխանությունն ու անվտանգությունը ոչ միայն մեր պետության, այլև Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի կողմից: Հետևաբար, ժամանակակից զինված ուժերի շինարարության հիմնախնդիրների լուծումը և անվտանգության հիմնական երաշխավորի՝ Արցախի Հանրապետության ԶՈՒ-ի մշտական կատարելագործումը մեր հանրապետության ինքնիշխան գոյության և զարգացման անհրաժեշտ պայմանն են:

Բանալի բառեր՝ Արցախի Հանրապետություն, հիբրիդային պատերազմ, անվտանգություն, ադրբեջանցի զավթիչներ, պաշտպանության բանակ, նորագույն տեխնոլոգիաներ, Թուրքիա, ահաբեկչություն, էքսպանսիա, ռազմական շինարարություն

М.Арутюнян

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ВЕДЕНИЯ ВОЙН НОВОГО ПОКОЛЕНИЯ (В СВЕТЕ ОСЕННЕЙ ВОЙНЫ 2020 ГОДА)

Военно-политическая хроника прошлого года в нашем регионе доказывает, что Трехстороннее объявление 9 ноября 2020 года о прекращении огня не дает оснований для иллюзий по поводу окончания войны, особенно для армянских сторон.Тем не менее, многие деятели вольно-невольно попадают в новую дипломатическую ловушку врага, автоматически повторяя односторонние утверждения Азербайджана и Турции о завершении войны.Для армянских сторон война не закончится до тех пор, пока не будут преодолены вызовы нашей государственности, особенно не будет восстановлена территориальная целостность Республики Арцах, ее статус как независимого государства не будет признан на международном уровне.

В таких условиях остаются приоритетом не только модернизация и перевооружение Вооруженных Сил РА, но и коренное преобразование Армии обороны Республики Арцах.Какими бы непреодолимыми ни казались проблемы военного строительства в Республике Арцах, мы должны приступить к их решению, повышая жизнеспособность и эффективность системы обороны и безопасности.

Конкретная организация вооруженных сил Арцаха будет прямо пропорциональна возможностям нашей республики, и суверенитет и безопасность Арцаха насколько адекватно будут оценены не только нашим государством, но и Республикой Армения и диаспорой.Поэтому решение задач строительства современных вооруженных сил, постоянное совершенствование главного гаранта безопасности - Вооруженных Сил Республики

Арцах - необходимое условие развития суверенного существования нашей республики.

Ключевые слова: Республика Арцах, гибридная война, безопасность, азербайджанские захватчики, Армия обороны, новейшие технологии, Турция, терроризм, экспансия, военное строительство.

M. Harutyunyan

ABOUT SOME FEATURES OF WAGING NEW GENERATION WARS
(IN THE LIGHT OF THE AUTUMN WAR 2020)

The military-political chronicle of last year in our region proves that the Tripartite declaration of a ceasefire on November 9, 2020 does not give rise to illusions about the end of the war, especially for the Armenian parties.Nevertheless, many figures, willingly or unwittingly, fall into the enemy's new diplomatic trap, automatically repeating the unilateral statements of Azerbaijan and Turkey about the end of the war.For the Armenian sides, the war will not end until the challenges of our statehood are overcome, especially the territorial integrity of the Republic of Artsakh is restored, its status as an independent state is not recognized at the international level.

In such conditions, not only the modernization and rearmament of the RA Armed Forces, but also the radical transformation of the Defense Army of the Republic of Artsakh remain a priority.No matter how insurmountable the problems of military development in the Republic of Artsakh may seem, we must start solving them, increasing the viability and efficiency of the defense and security system.

The specific organization of the armed forces of Artsakh will be directly proportional to the capabilities of our republic, and the sovereignty and security of Artsakh will be adequately assessed not only by our state, but also by the Republic of Armenia and the diaspora.Therefore, solving the problems of building modern armed forces, constantly improving the main guarantor of security - the Armed Forces of the Republic of Artsakh - is a necessary condition for the development of the sovereign existence of our republic.

Key words: Artsakh Republic, hybrid war, security, Azerbaijani invaders, Defense Army, latest technologies, Turkey, terrorism, expansion, military construction.

Հակառակ Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրքական պատերազմն ավարտված համարելու որոշ քաղաքական ու ռազմական գործիչների գայթակղությանը, հաճախակի են տեղի ունենում կամ այդպես էլ չեն դադարել հիբրիդային պատերազմի դրսևորումները: Մեր տարածաշրջանի վերջին մեկ տարվա ռազմաքաղաքական քրոնիկոնը գալիս է փաստելու, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը զինադադարի վերաբերյալ որևէ հիմք չի տալիս պատերազմի ավարտի մասին պատրանքներ

ունենալումանավանդ հայկական կողմերին:Այդուհանդերձ, քիչ չեն այն գործիչները, որոնք կամա թե ակամա հայտնվել են թշնամու քրոզչական-դիվանագիտական նոր ծուղակում և մեխանիկորեն կրկնում են պատերազմն ավարտվելու մասին Ադրբեջանի ու Թուրքիայի միակողմանի պնդումները: 2020 թ. ադրբեջանա-թուրքական ագրեսիայի պատճառով բռնազավթվել է Արցախի Հանրապետության ինքնիշխան տարածքի շուրջ 75 տոկոսը: Շարունակվում է հիբրիդային պատերազմը Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դեմ: Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորի դերը ստանձնած ՀՀ-ն այսօր ի վիճակի չէ նույնիսկ սեփական անվտանգությունն ապահովելու և անզոր է անգամ դուրս շպրտելու ՀՀ-ի սահմանները ներխուժած ադրբեջանցի զավթիչներին: Ադրբեջանն ու Թուրքիան աներևակայելի կերպով շահավետ դիրքերով ու պայմաններով են դուրս եկել իրենց իսկ սանձազերծած նվաճողական պատերազմից, ուստի համարում են պատերազմն ավարտված, այսինքն՝ ամեն կերպ, այդ թվում՝ սահմանազծման ու սահմանազատման, ինչպես նաև մտացածին միջանցք բացելու քաղաքական օրակարգ Հայաստանին պարտադրելու եղանակով ձգտում են ամրագրել, իրավական տեսք տալ զավթողական պատերազմի հետևանքներին: Իսկ հայկական կողմերի համար պատերազմը չի ավարտվել, քանի դեռ նշված և այլ մարտահրավերներ հաղթահարված չեն, մանավանդ վերականգնված չէ Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, և միջազգայնորեն ճանաչված չէ նրա՝ անկախ պետության կարգավիճակը:

Նման պայմաններում առաջանցիկ են մնում ոչ միայն ՀՀ զինված ուժերի արդիականացումն ու վերազինումը, այլ նաև Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի արմատական վերափոխումը: Ինչքան էլ անհաղթահարելի թվան Արցախի Հանրապետությունում ռազմական շինարարության խնդիրները, օր առաջ պետք է ձեռնամուխ լինել դրանց հանգուցալուծմանը, պաշտպանական-անվտանգային համակարգի կենսունակության ու արդյունավետության բարձրացմանը: Ուղիների ու եղանակների քննարկումն այլ աշխատանքի կամ ուսումնասիրության թեմա համարելով՝ նպատակահարմար ենք գտնում այդ համատեքստում դիտարկել պաշտպանության բանակի և, ընդհանրապես, ՀՀ զինված ուժերի մարտավարության որոշ հարցեր այլ տարածաշրջանների զինված հակամարտությունների ու հատկապես 2020 թ. աշնանային պատերազմի ռազմագիտական վերլուծությունների լույսի ներքո:

Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրքական ագրեսիվ, զավթողական և պատերազմական ու խաղաղ բնակչության ցեղասպանության հանցագործություններով ուղեկցվող 2020 թ. աշնանային ռազմարշավի վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներ կան մամուլում, թվայնացված լրատվական ու վերլուծական համացանցային հարթակներում և սոցիալական

ցանցերում: Ընթերցողի դատին են հանձնվել նաև առաջին գիտական կամ գիտահանրամատչելի հրատարակությունները[1]:

Այլևս ակնհայտ է, որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախում ռազմական շինարարության առաջնահերթությունները որոշելիս պետք է հաշվի առնվեին XX դարի 90-ականներին տեղի ունեցած մի շարք զինված հակամարտություններում իրագործված զինված պայքարի սկզբունքորեն նոր ձևերը, որոնք հիմնված էին սպառազինության որակապես նոր միջոցների կիրառման վրա: Դրանք հատկապես ակներև էին Պարսից ծոցի գոտում, Բոսնիայում և Հարավսլավիայում ՆԱՏՕ-ի անդամ երկրների ծավալած ռազմական գործողությունների ժամանակ[2]: Մարտավարության արդիականացման ու նորովի դրսևորման բազում օրինակներ դիտարկվեցին Սիրիայում, Իրաքում, Իսրայելում և այլ երկրներում շարունակվող ռազմական գործողությունների թատերաբեմերում(ՌԳԹ): Դրանց վերլուծության հիման վրա ռազմական մասնագետները հանգել են այն եզրակացությանը, որ նորագույն բարձր տեխնոլոգիաների զարգացումն ավելի ու ավելի մեծ ազդեցություն է գործում մարտական գործողությունների համընդհանուր տեղեկութայնացման և ավտոմատացման ապահովման վրա: Ուշագրավ էր հատկապես այն, որ այդ գործողությունների ժամանակ կիրառվում էին բարձր ճշգրտության զենքեր՝ տնտեսական և ռազմական ենթակառույցները կազմող լայն սպեկտրի նշանակետերի չափավորված և ընտրողական խոցման նպատակով[3]: Տեղորոշման տիեզերական ու ժամանակակից այլ միջոցների, հետախուզության հնարավորությունների մեծացման շնորհիվ գործնականում հնարավոր է հայտնաբերել ցանկացած օբյեկտ և խոցման թիրախ դարձնել: Հետևաբար՝ ժամանակակից պատերազմներում գործնականում խոցելի են դառնում հակառակորդ երկրի ամբողջ տարածքով մեկ սփռված օբյեկտները,

---

[1]*Տե՛ս* ***Հակոբյան Թ. Ա.,*** *Մահվան հովիտ: 44-օրյա աղետ, 27 սեպտեմբեր-10 նոյեմբեր, 2020: Լրագրողի օրագրից, Երևան, Լուսակն, 2021, 359 էջ,* ***Հարությունյան Մ.Ա.,*** *«Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները,» Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2021, էջ 33, 64-65, 87, 144, 149, 168, 246-247,* ***Պետրոսյան Մ.Ա.,*** *Պատերազմ իսերունդներ. Պատերազմի զարգացումը արդի փուլում», «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդես), 2021, № 1, էջ 16 և այլն (այսուհետև՝ նն):*

[2]*Տե՛ս* ***Գրիգորյան Մ. Գ.,*** *Տեղային պատերազմների և ռազմական բախումների բնույթն ու բովանդակությունը, «Հայկական բանակ», №1, 1999, էջ 37-47,* ***Նավասարդյան Ա.Գ.,*** *Նոր աշխարհակարգի մարտահրավերները փոքր պետությունների դիվանագիտությանը, http://www.diplomat.am/publ/authors/arman_navasardyan/1/40-1-0-1353,* ***Хаустова Н. А., Глазунов О. Н.,*** *Контуры стратегической нестабильности XXI века. Геополитические игры на мировой шахматной доске: прогнозы до 2030 года, М.: Ленанд, 2014, 176 с.,* ***Багатуров А. Д.,*** *Современный международный порядок. Современные международные отношения и мировая политика. М., Изд. Просвещение, 2005, с. 72 նն:*

[3]*Տե՛ս* ***Карпов И.А.,*** *«Приоритеты развития высокоточного оружия», «Военный парад», 2009, т. 95, № 05, с. 22-24,* ***Гурский Б. Г., Солунин В. Л., Свободин А. М.,*** *«Роль высокоточного оружия при ведении боевых действий в городских условиях», «Военная мысль», № 5, 2011, стр. 45-48:*

հարաբերական են դառնում «մարտական շփման գիծ», «թիկունք» և «ռազմաճակատ» հասկացությունները[1]:

Թուրքիայի բացահայտ ու համակողմանի աջակցությամբ և հաճախ անմիջական մասնակցությամբ, ինչպես նաև միջազգային ահաբեկչական, ծայրահեղ-իսլամիստական կազմակերպությունների զինյալների լայնորեն ներգրավմամբ 2020 թ. աշնանը Ադրբեջանի ծավալած ռազմական գործողությունների նախնական իսկ վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ թշնամին ավելի շուտ ու ճիշտ է գնահատել մարտական գործողությունների համընդհանուր տեղեկությայնացման և ավտոմատացման ապահովման վրա մեծ ազդեցություն ունեցող նորագույն բարձր տեխնոլոգիաների վճռորոշ նշանակությունը և 1994, մանավանդ՝ 2010-ական թվականներից նպատակասլաց նախապատրաստություններ է տեսել՝ օդային լիակատար գերակայության հասնելու ու նոր սերնդի պատերազմ վարելու համար: Ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական-ահաբեկչական դաշինքի գործողությունների ժամանակ բարձր ճշգրտության զենքերով հիմնականում չափավորաբար և ընտրողաբար խոցվել են Արցախի Հանրապետության տնտեսական և ռազմական ենթակառույցներն ընդգրկող նշանակետերը: Տեղորոշման տիեզերական ու ժամանակակից այլ միջոցների, հետախուզության հնարավորությունների մեծացման շնորհիվ ոսոխը գործնականում հնարավորություն է ունեցել հայտնաբերելու ցանկացած օբյեկտ և այն դարձնել խոցման թիրախ: Հետևաբար՝ ահաբեկչական մեթոդներով հայ ժողովրդի դեմ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի սանձազերծած նոր սերնդի պատերազմում գործնականում խոցելի են դարձել մեր հանրապետության ամբողջ տարածքով մեկ սփռված օբյեկտները, արդեն իսկ հարաբերական են դարձել «մարտական շփման գիծ», «թիկունք» և «ռազմաճակատ» հասկացությունները:

Ռազմական պատմաբան, պահեստազորի գնդապետ Մ. Ռ. Խաչատրյանը նկատել է, որ XX դարավերջին, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի նորագույն հեղափոխական տեսակների և տիպերի ստեղծմանը նպաստած գիտական ու տեխնոլոգիական հսկայական նվաճումներով հանդերձ, «գիտական կանխատեսումը Ռուսաստանում անընդունակ գտնվեց հիմնավորելու նոր սերնդի պատերազմների բնույթը»: Իսկ Հայաստանը, որ հեղինակի ձևակերպմամբ՝ «ռազմական, ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական և ռազմագիտական տեսակետներից գտնվելով Ռուսաստանի մեծ ազդեցության ներքո, եթե չասենք՝ նրանից բավական մեծ

---

[1]Տես ***Շիրխանյան Վ. Գ.,*** *Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից զինված ուժերի շինարարության հիմնահարցերը, «Զինված ուժերի կառուցում, ռազմավարություն, զորքերի կառավարում (ըստ զինատեսակների, զորատեսակների և հատուկ զորքերի)» մասնագիտությամբ ռազմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2000, էջ 6-18:*

կախվածության մեջ, նույնպես ի վիճակի չի եղել պարզաբանելու ռազմագիտական այդ հարցը»: Դա ռազմական պատմաբանը պայմանավորել է Հայաստանում ռազմական գիտության և ռազմական տեսության, այդ թվում՝ ռազմարվեստի ու ռազմական պատմագիտության թերզարգացվածությամբ, ինչը «դժվարացնում է համաշխարհային ռազմական գիտության, ռազմական տեսության, ռազմարվեստի զարգացման ու ռազմապատմական գիտության նվաճումներին հաղորդակից լինելը, առավել ևս՝ դրանք կիրառելը սեփական ռազմական անվտանգության ապահովման և ռազմական անվտանգության համակարգի կատարելագործման հսկայական կարևորության գործում»[1]: Անկասկած, այս միտքն ընդունելի կարող է լինել որոշ վերապահումներով: Անիմաստ է անտեսել վերջին տարիներին հատկապես ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (ԱՌՀԻ) (այժմ՝ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան՝ ՊԱՀՀ) և «Նորավանք» ԳԿՀ-ի, ինչպես նաև այլ գիտաուսումնական հիմնարկների կողմից վերոհիշյալ ոլորտներում իրականացված հսկայածավալ գիտահետազոտական աշխատանքները ու դրանց արդյունքների հրատարակումը (*տե՛ս մեր աշխատության հավելվածի մատենագիտական ցանկը*[2]):

Առաջատար ռազմագետների կարծիքով՝ գերճշգրիտ և նոր ֆիզիկական սկզբունքների հիման վրա գործող զենքերը մինչև 2020-ական թվականները, իսկ որոշ երկրներում՝ ավելի շուտ, կսկսեն դուրս մղել ներկայիս բազմաթիվ զորային կազմավորումներ և կարժեզրկեն ոչ միայն միջուկային զենքը, այլև ցամաքային զորքերի հիմքի վրա կազմվող սովորական զինված ուժերը[3]: Ըստ որոշ կանխատեսումների՝ նոր պատերազմներն ըստ ամենայնի չեն ունենա տևական բնույթ, և զինված պայքարի ամբողջ գործընթացը կանցնի ուժեղ կողմի պարտադրած օրենքներով ու կանոններով. այն կողմի, որն ավելի լավ պատրաստված կլինի պատերազմի:

Դժբախտաբար, 2020 թ. աշնանը մեր սեփական կաշվի վրա զգացինք առաջատար ռազմագետների կանխատեսումներից շատերի իրականացումը հատկապես գերճշգրիտ զենքերիառավելության, ցամաքային զորքերի հիմքի վրա կազմված սովորական զինված ուժերի արժեզրկման և զինված պայքարն ուժեղ, պատերազմին ավելի լավ պատրաստված կողմի պարտադրած օրենքներով ու կանոններով ընթանալու առումներով:

---

[1] ***Խաչատրյան Մ. Ռ., «****Արցախի 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը և պատերազմների էվոլյուցիան. Մաս III», «Անդին» (գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր), հմ. 6, հունիս, 2016, էջ 109:*

[2] ***Հարությունյան Մ. Ա., «****Ռազմական շինարարությունը Արցախում 1991-2006 թթ.,» Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2017, էջ 370-412:*

[3] ***Дульнев П. А., Ковалев В. Г., Ильин Л. Н., «****Асимметричное противодействие в сетецентрической войне», «Военная мысль», № 10, 2011, стр. 3-8, նույնը տես«Գլոբուս» վերլուծականհանդես, թիվ 8, 2012:*

Մասնագետները սկզբունքորեն կարևորել են այն հանգամանքը, որ նոր տիպի պատերազմ վարող կողմը, իր ռազմավարական նպատակներին հասնելու համար, պարտադրված չէ գրավել և երկար ժամանակ պահել հակառակորդի տարածքները: Տակավին 2016 թ. ապրիլյան նախահարձակումից 16, իսկ 2020 թ. աշնանային էքսպանսիայից 20 տարիներ առաջ ահազանգ է հնչեցվել, որ նոր սերնդի պատերազմներին չնախապատրաստված պետությունն իրեն դատապարտում է անխուսափելի պարտության, քանի որ հակառակորդի կողմից նոր միջոցներով հասցվող զանգվածային հարվածին դիմակայելու համար անհրաժեշտ է ունենալ միանգամայն այլ ԶՈՒ, որը պետք է ստեղծվի ոչ թե մեծ ցամաքային խմբավորումների, այլ պաշտպանության մի այնպիսի արդյունավետ համակարգի հիմքի վրա, որն ունակ լինի հետ մղելու երկարատև հարվածները և ունենա բավարար թվով տարբեր հեռահարությամբ խոցման սեփական գերճշգրիտ* միջոցներ[1]:

Ռուսաստանյան մասնագետների կարծիքով՝ նման սպառազինություն ունենալը հավասարեցնում է հակամարտող երկրների (դաշինքների) ռազմաստրատեգիական և աշխարհաքաղաքական հնարավորությունները՝ տնտեսական, գիտատեխնիկական և ռազմական զարգացման էական տարբերություններով հանդերձ[2]:

Անվերապահորեն համամիտ լինելով ռուսաստանյան մասնագետների հետ՝ գտնում ենք, որ եթե հայկական կողմերը հավուր պատշաճի ուշադրություն դարձնեին գերճշգրիտ զինատեսակներին, նմանօրինակ սպառազինությանը ու նոր սերնդի պատերազմ վարելու համար անհրաժեշտ միջոցներին, ապա կարող էին հասնել թուրք-ադրբեջանա-ահաբեկչական դաշինքի հետ սեփական ռազմաստրատեգիական և աշխարհաքաղաքական հնարավորությունների համաչափ հավասարեցմանը կամ տնտեսական, գիտատեխնիկական և ռազմական հնարավորությունների էական տարբերությունների համադրելիությանը:

---

*Հաստատված է, որ լիցքի հզորության և ճշգրտության հաշվին հրթիռի խոցունակությունը երկուական անգամ մեծացնելու դեպքում այն մեծանում է առաջին դեպքում 40 տոկոսով, իսկ երկրորդի՝ արդեն 400 տոկոսով:

[1]Տե՛ս **Շիրխանյան Վ. Գ.,** Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից զինված ուժերի շինարարության հիմնահարցերը, «Զինված ուժերի կառուցում, ռազմավարություն, զորքերի կառավարում (ըստ զինատեսակների, զորատեսակների և հատուկ զորքերի)» մասնագիտությամբ ռազմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2000, էջ 4:

[2]Տե՛ս **Рогозин О. К.,** «Высокоточные вооружения как явление XXI века», «Территория надежды», Сборник статей и аналитических записок Международной академии наук по проблемам национальной безопасности, М., 1999, с. 73:

Ուսումնասիրողները 10-15 տարվա հեռանկարում գերճշգրիտ զենքի կրակի ճշտության համար կանխատեսում էին բազմակի մեծացում, ԶՈՒ-ի տեսակների փոփոխություն: Եթե նախկինում զինված հակամարտության հիմնական բեռն ավանդաբար ընկնում էր ցամաքային զորքերի վրա, քանի որ դրանք ինքնուրույնաբար և այլ զորատեսակների աջակցությամբ պետք է հասնեին պատերազմի ռազմական ու քաղաքական նպատակներին, ապա նոր սերնդի պատերազմներում, ըստ երևույթին, բավական կլինի գերճշգրիտ զենքով շարքից հանել հակառակորդի հարվածային միջոցները, դրանց կառավարման համակարգերն ու ենթակառույցները, առաջին հերթին՝ հանգուցային ռազմական օբյեկտները, էներգամատակարարման և հաղորդակցման համակարգերը, որպեսզի կազմալուծվեն հակառակորդ երկրի քաղաքական կարգերը և ԶՈՒ-ի, ըստ երևույթին, նաև ամբողջ երկրի (պետության) ղեկավարումը:

2020 թ. աշնանային ագրեսիայի օրերին ակներև էր, որ գերճշգրիտ զենքով ՊԲ հարվածային միջոցները, դրանց կառավարման համակարգերն ու ենթակառույցները, առաջին հերթին՝ հանգուցային ռազմական օբյեկտները, էներգամատակարարման և հաղորդակցման համակարգերը շարքից հանելով՝թշնամին ըստ էության կազմալուծել էր մեր զինված ուժերի ու պետության օպերատիվ ղեկավարումը: Դժբախտաբար, ռազմական ու քաղաքական շատ գործիչներ դեռ կարծում էին, որ տակավին 1991-1994 թթ.զինված հակամարտության հիմնական բեռն ավանդաբար իր ուսերին կրած ցամաքային զորքերը դարձյալ ի զորու էին լինելու ինքնուրույնաբար և այլ զորատեսակների աջակցությամբ հասնելու պատերազմի ռազմական ու քաղաքական նպատակներին, այնինչ՝ նոր սերնդի պատերազմներում իրականությունը միանգամայն այլ էր: Ակներևաբար ռազմաճակատում ձախողումների պատճառներից պետք է համարել նաև մեր ռազմաքաղաքական ղեկավարության նոր սերնդի պատերազմ վարելու մասին իրատեսական պատկերացում և կիրառական հմտություններ չունենալը:

Արցախում ռազմական շինարարության առաջնահերթությունները որոշելու համար անհրաժեշտ էր հաշվի առնել տեսաբանների կանխատեսած փոփոխությունը ինչպես ռազմավարության, այնպես էլ օպերատիվ արվեստի ու մարտավարության ավանդական պատկերացումների համար: Մասնավորապես՝ մեծ է համարվում միաժամանակ բոլոր ուղղություններով և ռազմական գործողությունների թատերաբեմի ամբողջ տարածքով մեկ հարվածներ հասցնելու մարտավարության կողմից անգամ գլխավոր հարվածի ուղղությամբ ուժերի կենտրոնացման հասկացությունը ստվերում թողնելու հավանականությունը:

Մասնագետների այն դիտարկումը, որ նոր տիպի պատերազմ վարող կողմերը, իրենց ռազմավարական նպատակներին հասնելու համար, ամենևին

էլ պարտադրված չեն լինի գրավել և երկար ժամանակ պահել հակառակորդի տարածքները, կարծես թե թյուրըմբռնում էր առաջ բերել հասարակության որոշ շրջաններում պաշտոնական լրատվամիջոցներով և տեղեկատվական միասնական շտաբի միջոցով մարտավարական նահանջների հետևանքով մեր չափանիշներով ընդարձակտարածքներ ժամանակավորապես թողնելու մասին հայտարարությունների նկատմամբ:

Հավանական է համարվել, որ կգան պատերազմի վարման ընդունված մեթոդների իմաստազրկման, մինչև անգամ նորագույն մարտական տեխնիկայի կիրառման աննպատակահարմարության ժամանակները: Մինչև անգամ ցամաքային խմբավորումներ կիրառելու անհրաժեշտություն չի լինի այն պետությունների համար, որոնք լիարժեք կերպով են նախապատրաստվել նոր սերնդի պատերազմին: Գործնականում անհնարին կլինի առանձնացնել մարտավարական բնագծերն ու թևերը: «Ռազմաճակատ», «թիկունք» և այլ բառեզրերի փոխարինելու կգան «հարվածի ենթակա» ու «հարվածի ոչ ենթակա» հասկացությունները: Ենթադրվում է, որ դժվար կլինի նաև տարբերակել ռազմավարությունը և օպերատիվ արվեստը: Ավելին՝ եթե հակառակորդը պատրաստ չլինի նոր սերնդի պատերազմին և նախապատվություն տա իր ցամաքային ուժերի կիրառմանը, ապա անգամ այդ պարագայում թերևս հարկ չի լինի ջախջախել դրանք[1]: Տեսականորեն հնարավոր է համարվել, որ ցամաքային ուժերը, բացի հակահարվածի միջոցներից, այլևս լուրջ վտանգ չեն ներկայացնի և քայքայված տնտեսության պայմաններում դատապարտված կլինեն անմարտունակության և լրիվ քայքայման:

2020 թ. աշնանը հաճախակի էինք հայտնվում այնպիսի իրավիճակներում, երբ թվում էր, որ եկել են պատերազմի վարման ընդունված մեթոդների իմաստազրկման, մինչև անգամ նորագույն մարտական տեխնիկայի կիրառման աննպատակահարմարության ժամանակները: Նոր սերնդի պատերազմի պահանջներին հայկական զինված ուժերի կարողությունները համապատասխանեցնելու գործն անհապաղ ու պատեհաժամորեն ավարտելը կարող էր թեթևացնել ցամաքային ուժերի գործառույթները ռազմաճակատում և նվազեցնել անվերադարձ կորուստները (թեկուզ պատերազմի որոշ փուլերում): 2020 թ. աշնանային ռազմարշավի օպերատիվ-մարտավարական իրադրության նախնական իսկ գնահատումը ցույց է տվել, որ հատկապես հարավային

---

[1] *Ներկայումս ռազմական գիտության մեջ որոշակի զարգացում է ապրել արդյունքների հասնելու վրա խարսխված գործողությունների (ԱՀԽԳ) վերաբերյալ տեսությունը, որի առաջին սկզբունքը (կանոնը) պարտադիր չի համարում հակառակորդի մարտական հնարավորությունների ոչնչացումը՝ անհրաժեշտ արդյունքի հասնելու համար (տե՛ս* ***Арзуманян Р.,*** *Сложное мышление и сеть: парадигма нелинейности и среда безопасности 21-ого века, Ереван, НОФ «Нораванк», 2011, с. 345):*

ուղղությունում գործնականում անհնարին է դարձել մարտավարական բնագծերի ու թևերի առանձնացումը: Ստեղծված իրավիճակում «ռազմաճակատ», «թիկունք» և այլ եզրաբառերի փոխարեն ավելի բնութագրական են դարձել «հարվածի ենթակա» ու «հարվածի ոչ ենթակա» հասկացությունները: Փաստորեն դժվարացել է նաև ավանդական ռազմավարությունը և օպերատիվ արվեստը տարբերակելը, մանավանդ որ հիբրիդային պատերազմ մղող հակառակորդը առանձնակի ջանքեր չէր գործադրում իր ցամաքային ուժերը զանգվածաբար կիրառելու և Արցախի Հանրապետության այլ բնագծերում (հատկապես *Ակնա-Ասկերան-Ստեփանակերտ* ռազմավարական գծի վրա) պաշտպանվող ՊԲզորամասերը ջախջախելուուղղությամբ: Տեսականորեն հնարավոր համարվող այն իրավիճակը, երբ ցամաքային ուժերը, բացի հակահարվածի միջոցներից, այլևս լուրջ վտանգ չեն ներկայացնում քայքայված տնտեսության ու ղեկավարման համակարգի կազմալուծման պայմաններում և, ի վերջո, դատապարտված կլինեն անմարտունակության և լրիվ քայքայման, փաստորեն ստեղծվել էր նաև մեր հանրապետությունում: Այս փաստի հաշվառմամբ անհասկանալի է Ադրբեջանի էներգակիրների հանքերի ու խողովակաշարերի թիրախավորման անմեկնելի ձգձգումը: Հապաղումը նշանակում էր հրաժարվել Արցախի Հանրապետության դեմ ագրեսիան, միջազգային ահաբեկչական խմբավորումներից հավաքագրված վարձկանների վճարման և խաղաղ բնակավայրերի հրթիռակոծման ու ռմբակոծման համար ծախսվող թշնամի երկրի ռազմական բյուջե վիթխարի արտարժույթի հոսքն ընդհատելու բացառիկ հնարավորությունից: Ավելին, զինադադարի մասին 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը, որը կապիտուլյացիոն ու անընդունելի պայմաններ էր փաթաթում հայկական պետականության վզին, հնարավորություն տվեց թուրք-ադրբեջանցի զավթիչներին առանց մի կրակոցի, առանց որևէ ջանքերի բռնագրավելու Արցախի Հանրապետության ռազմավարական նշանակության բազմաթիվ բնագծեր Ակնայի, Քարվաճառի, Մարտակերտի և այլ շրջաններում:

Վերոնշյալ բնույթի պատերազմներում հաղթանակ կարող են ապահովել միմիայն համապատասխան զինված ուժերը: Ընդ որում, եթե նախկինում պետությունների զինված ուժերը բաղկացած էին համապիտանի բաղադրիչներից, որոնք, ելնելով իրադրությունից, պատրաստ էին կատարելու թե պաշտպանական և թե հարձակողական գործառույթներ, ապա նոր սերնդի պատերազմների համար անհրաժեշտ են այնպիսի զորքեր, որոնց գործառույթները լինեն հստակորեն տարբերակված, ինչի հետևանքով պահանջվում է ԶՈՒ-ի կառուցվածքային բաղադրիչների, նրանց տեսակների ու սպառազինության համապատասխան փոփոխություն:

Ակնհայտ է, որ 2020 թ. պատերազմի աղետալի հետևանքերի պայմաններում Արցախի զինված ուժերի կոնկրետ կազմակերպվածքն ուղիղ համեմատական է

լինելու մեր հանրապետության հնարավորություններին և նրան, թե որքան համարժեք են գնահատվելու Արցախի ինքնիշխանությունն ու անվտանգությունը ոչ միայն մեր պետության, այլև Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի կողմից: Հետևաբար, ժամանակակից զինված ուժերի շինարարության հիմնախնդիրների լուծումը և անվտանգության հիմնական երաշխավորի՝ պաշտպանության բանակի (ընդհանրապես՝ Արցախի Հանրապետության ԶՈՒ-ի) մշտական կատարելագործումը մեր հանրապետության ինքնիշխան գոյության և զարգացման անհրաժեշտ պայման են:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյանը: